Արձանագրություն N 2

«ՄՌԱԳԿ-ԳՀԱՇՁԲ-19/05» ծածկագրով գնանշման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «17» «Սեպտեմբերի» 2019թ.

Ժամը՝ 11:00

Հանձնաժողովի նախագահ

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Հովհաննես Հովհաննիսյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Գուրգեն Կանեցյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ցոլակ Մալաքյան
3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Լուսինե Ավետիսյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Նունե Գագինյան
5.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Աննա Հարությունյան

1. ՄՌԱԳԿ-ԳՀԱՇՁԲ-19/05 ծածկագրով մրցույթի հայտերի բացումը, օրը և ժամը

(Հ.Հովհաննիսյան)

1.1 «ՄՌԱԳԿ-ԳՀԱՇՁԲ-19/05» ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2019 թվականի Սեպտեմբերի 17-ին, ժամը 11:00-ին:

2. Հայտ ներկայացրած մասնակիցների տվյալների հրապարակում

(Հ.Հովհաննիսյան)

2.1 Հայտեր ներկայացվել են հետևյալ մասնակիցների կողմից.

Մասնակիցների անվանումները	Հասցե
<<Հայր և որդի Բեգլարյաններ>>ՍՊԸ	Ք. Էջմիածին, Կարճիկյան 2
<<Հարեհաս>> ՍՊԸ	ՀՀ Տավուշի մարզ, Գետահովիտ 6, 1-ին նրբ.12

3. Հայտերը էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

(Հ.Հովհաննիսյան)

3.1 <<Հայր և որդի Բեգլարյաններ>>ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված էր հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, իսկ <<Հարեհաս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթը պատշաճ կերպով չէր բեռնվել ARMEPS համակարգում, ինչի հետևանքով հայտում ներառված փաստաթղթերը բացակայում էին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

(Հ.Հովհաննիսյան)

4.1 <<Հայր և որդի Բեգլարյաններ>>ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով փաթեթով ներկայացված ՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը համապատասխանում էին հրավերով սահմանված պահանջներին, իսկ <<Հարեհաս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթը պատշաճ կերպով չէր բեռնվել ARMEPS համակարգում, ինչի արդյունքում հայտում ներառված փաստաթղթերը հնարավոր չի եղել գնահատել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տվյալներ մասնակիցների կողմից առաջարկված գների վերաբերյալ

(Հ.Հովհաննիսյան)

/ՀՀ դրամ/

հ/հ	Աշխատանքների անվանումը	նախահաշվային գինը	Չափման միավոր	Մասնակցի անվանումը	
				<<Հայր և որդի Բեգլարյաններ>> ՍՊԸ	
				Գինը առանց ԱԱՀ	Գինը ներառյալ ԱԱՀ
1	«ՀԱԷԿ-ի վերահսկվող տարածքում կայանների տեղադրման հենքի և պաշտպանիչ ցանցավանդակի մոնտաժման աշխատանքներ»	6004320	դրամ	5003600	6004320

6. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

(Հ.Հովհաննիսյան)

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Մասնակցի անվանումը	
		<< Հարեհաս>> ՍՊԸ	<<Հայր և որդի Բեգլարյաններ>> ՍՊԸ
1	«ՀԱԷԿ-ի վերահսկվող տարածքում կայանների տեղադրման հենքի և պաշտպանիչ ցանցավանդակի մոնտաժման աշխատանքներ»	-	1

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների և պատասխանների մասին

(Հ.Հովհաննիսյան)

7.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

8. Հանձնաժողովը որոշեց՝

(Հ.Հովհաննիսյան)

8.1 Մերժել <<Հարեհաս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, այն է. *<<հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը >>:*

8.2 «ՄՌԱԳԿ-ԳՀԱՇՁԲ-19/05» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Հայր և որդի Բեգլարյաններ>>ՍՊԸ-ին, և ծանուցել, որպեսզի մասնակիցը, հրավերով սահմանված կարգով, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնի մրցույթի հրավերով պահանջվող որակավորման հիմնավորման փաստաթղթերը:

8.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել՝ «ՄՌԱԳԿ-ԳՀԱՇՁԲ-19/05» ծածկագրով մրցույթի մասնակցի մասին պահանջվող տեղեկատվությունը ստանալու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ.Հովհաննիսյան)

9.1 «ՄՌԱԳԿ-ԳՀԱՇՁԲ-19/05» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստ հրավիրել սեպտեմբերի 23-ին, ժամը՝ 11:00-ին, «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք.Երևան, Տիգրան-Մեծի 4, 6-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝ հանձնաժողովի. Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու **(ԳՊ/ԳԱՊ)**		Հ.Հովհաննիսյան
		Գ.Կանեցյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)**		Ց. Մալաքյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)**		Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)**		

Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)** _____ Ն.Գագինյան

Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող **(ԳՊ/ՄՀմ)** _____ Ա.Հարությունյան